ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 410 -Ա

« 18 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրնքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշմամբ հաստատված 10-րդ հավելվածի «Ի. Եղեգնաձորի տարածաշրջան» բաժնի 10-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 1.1-ին կետի, 9-րդ պարբերությունից հետո ավելացնել հետևյալ պարբերությունը.

«Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության (պետական գրանցման համար՝ **65.210.869817**), «Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (պետական գրանցման համար՝ **65.120.1397382**), «Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (պետական գրանցման համար՝ **65.120.1405619**), «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (պետական գրանցման համար՝ **65.120.1403111**) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան (միացում):

2. «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 103 000 000 (մեկ հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 515 (հինգ հարյուր տասնհինգ) հատ սովորական անվանական բաժնետոմս, 1 բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Բոլոր 515 (հինգ հարյուր տասնհինգ) հատ սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը:»:

3. Հաստատել «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կանոնադրության փոփոխությունը:

4. Ընկերության տնօրեն Կ. Ասատրյանին՝ երկշաբաթյա ժամկետում օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կատարված փոփոխության պետական գրանցման համար:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 17.05.2024թ. գրանցված կանոնադրության անբաժանելի մասը:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր